ՍՄԿԿ XXVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Ս. ՄԵԼԻՔՅԱՆ

ՍՄԿԿ պատմությունն աչքի է ընկնում մեծ իրադարձություններով, իրենց նշանակությունը և կենսունակությունը պահպանած համագումարներով, որոնք կարևոր ուղենիշ են հանդիսացել լենինյան կուսակցության, մեր երկրի զարգացման պատմության մեջ, մեծապես ազդել են հեղափոխական պրոցեսի զարգացման, հասարակական կյանքի առաջընթացի վրա։

Պատմական այդ իրադարձությունների շարքում իր նշանակությամբ բացառիկ կարևոր տեղ կգրավի նաև ՍՄԿԿ XXVII համագումարը, որը նախանշեց սովետական հասարակության որակական կատարելագործման, կյանքի բոլոր բնագավառներում արմատական բեկման նորարարական, իրավամբ հոյակապ կուրսը։

Համագումարը տեղի ունեցավ Մոսկվայում, 1986 թ. փետրվարի 25-ից մինչև մարտի 6-ը։ Կուսակցության ավելի քան 19 միլիոն անդամներից համագումարի պատգամավորներ էին ընտրվել 5000-ը։ Հայաստանի կոմունիստական կուսակցության ավելի քան 180 հազար անդամներին համագումարում նեկայացնում էին 50 պատգամավոր։ Ուշադրության է արժանի պատգամավորների կազմը։ Նրանցից 1705-ը բանվորներ էին, 872-ը գյուղատնտեսության, 114-ը՝ գիտության և բարձրագույն դպրոցի, 156-ը՝ գրականության ու արվեստի. մշակույթի, մամուլի, ժողովրդական կրթության ու առողջապահության աշխատողներ։ Պատգամավորների թվում կային 1352 կին։ Պատգամավորների կազմում արտացոլված էր ՍՄԿԿ ինտերնացիոնալ էությունը, մի բան, որն իրենով մարմնավորում է ՍՍՀՄ ժողովուրդների անխախտ բարեկամությունը։ 72 ազգերի ու ազգությունների ներկայացուցիչներ էին մասնակցում համագումարին։ Զգալի չափով աճել էր երիտասարդ պատգամավորների թիվը։

Համագումարն արժանացավ միջազգային լայն ճանաչման։ Դրա ակնառու վկայությունն էր այն, որ նրա աշխատանքներին մասնակցում էին 113 երկրների 152 պատվիրակություններ։ Սոցիալիստական երկրների պատվիրակություններից բացի ներկա էին նաև մի շարք կառավարող կուսակցությունների պատվիրակություններ Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի երկրներից, որոնք ընտրել են սոցիալական առաջադիմության և ազգային ազատագրության ուղին։ Համագումար էին եկել կոմունիստական ու բանվորական կուսակցությունների պատվիրակություններ Արևմտյան Եվրոպայից, ԱՄՆ-ից ու Կանադայից, Ասիայի և Խաղաղ օվկիանոսի, Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի երկրներից։ Համագումարի ամբիոնից հնչեց ջերմագին ողջույն՝ ուղղված «դասակարգային մեր եղբայրներին, կոմունիզմի իդեալների, աշխատավոր մարդկանց շահերի, խաղաղության, դեմոկրատիայի և ամբողջ մարդկության ազատության համար պայքարող քաջարի մարտիկներին»։ Նշվեց, որ «մեր մտքերը նրանց հետ են, ովքեր այսօր հեծում են զնդաններում ու բանտերում, հաշվեհարդարների և հալածանքների ենթարկվում իրենց առաջադիմական հայացքների համար»։ Համագումարին մասնակցում էին նաև հեղափոխական-դեմոկրատական և ազգային դեմոկրատական կուսակցությունների պատվիրակություններ։ Պատերազմի վտանգի դեմ հասունացող համաշխարհային ճակատի ընդլայնման ու ամրապնդման վկայությունն էր նաև այն, որ սովետա-

կան կոմունիստների համաժողովին մասնակցում էին հյուրեր տարբեր երկրների սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական, լեյբորիստական կուսակցություններից, ինչպես նաև Սոցիալիստական ինտերնացիոնալից։

Արտասահմանյան պատվիրակությունների ղեկավարներն իրենց ելույթներում ջերմորեն հավանություն տվեցին համագումարի գործնական, աներեր վճռականությամբ առլեցուն կուրսին, նշեցին, որ այն հսկայական բարերար ներգործություն կունենա ամբողջ աշխարհի առաջընթացի վրա։

Առաջին իսկ նիստում հաստատվեց համագումարի օրակարգը.

1. ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության խնդիրները։

2. ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրության մասին։

3. ՍՄԿԿ Կանոնադրության փոփոխությունների մասին։

Ընդունվեց այն առաջարկությունը, որ առաջին երեք հարցերի առթիվ առանձին զեկուցումներ չտրվեն, այլ դրանց էությունը շարադրվի կուսակցության XXVII համագումարին ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի Քաղաքական զեկուցման մեջ։ Օրակարգում հաստատվում է ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի Քաղաքական զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարին։

4. ՍՄԿԿ Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը։

5. ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թվականների և մինչև 2000 թվականն ընկած հեռանկարի հիմնական ուղղությունների մասին։

6. Կուսակցության կենտրոնական մարմինների ընտրություններ։

Օրակարգի կենտրոնական հարցը, որն իր վրա բևեռեց համագումարի պատգամավորների, սովետական ժողովրդի, ամբողջ աշխարհի մարդկության ուշադրությունը, հանդիսացավ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի Քաղաքական զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարին»։

Օրակարգի 4-րդ և 5-րդ հարցերի մասին զեկուցումներով հանդես եկան ՍՄԿԿ կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Գ. Ֆ. Սիդովը և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ի. Ռիժկովը։

Համագումարի ընդունած կարևորագույն փաստաթղթերի թվում են «Սովետական Միության կոմունիստական կուսակցության Ծրագիրը (նոր խմբագրություն)», «Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կանոնադրությունը», ինչպես նաև «Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարի բանաձևը ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի Քաղաքական զեկուցման առթիվ» և համագումարի կողմից հաստատված «ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թվականների և մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները»։

Համագումարի աշխատանքների հաջողությանը մեծապես նպաստեց այն, որ նախահամագումարյան ժամանակաշրջանում երկիրն արդեն սկսել էր ընթանալ ՍՄԿԿ Ապրիլյան (1985 թ.) պլենումի նշած ուղիով, համակուսակցական, համաժողովրդական քննարկման էին ներկայացվել ՍՄԿԿ Ծրագրի նոր խմբագրության, ՍՄԿԿ փոփոխված Կանոնադրության, ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման հիմնական ուղղությունների նախագծերը։ Այդ հանգամանքն ամբողջ երկրում առաջ բերեց մեծագույն քաղաքական վերելք, պայքարի ու լավատեսության տրամադրություն։

Սահմանելով արդի դարաշրջանի հիմնական բովանդակությունը. այն է՝ անցումը սոցիալիզմից կոմունիզմին, համագումարը, ինչպես ՍՄԿԿ Ծրագրի նոր խմբագրության, այնպես էլ Կենտկոմի Քաղաքական զեկուցման մեջ զգալի տեղ հատկացրեց լենինյան կուսակցության անցած պատմական ուղու գնահատմանը, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման հարցերին։ Նշվեց, որ Հոկտեմբերյան հեղափոխու-

թյամբ «սկսվեց նոր աշխարհի արարումը», որ իրագործելով սոցիալիզմի կառուցման ծրագիրը, «ընթանալով չտրորված ուղիներով, հաղթահարելով չըտեսնված դժվարություններ, դրսևորելով չտեսնված հերոսություն, սովետական ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կենսագործեց Վ. Ի. Լենինի մշակած սոցիալիստական շինարարության պլանը»։ Սոցիալիզմը մեր երկրում դարձավ իրողություն։ Երկիրը թևակոխեց զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանը։

Գնահատելով ՍՄԿԿ երրորդ Ծրագրի ընդունումից հետո անցած քառորդ դարի մեր նվաճումները, ընկ. Մ. Ս. Գորբաչովը նշեց, որ «մենք ըստ էության նորից վերաշինեցինք ամբողջ երկիրը, հսկայական տեղաշարժերի հասանք էկոնոմիկայի, մշակույթի, սոցիալական բնագավառում, դաստիարակեցինք նոր հասարակություն կերտողների սերունդներ։ Մարդկության համար բացեցինք դեպի տիեզերք տանող ճանապարհը։ Ապահովեցինք ռազմաստրատեգիական ուղակշռություն, որն էապես սահմանափակեց իմպերիալիզմի ագրեսիվ պլանները և միջուկային պատերազմ սանձազերծելու նրա հնարավորությունները։ Ձգալիորեն ամրապնդվեցին մեր հայրենիքի, համաշխարհային սոցիալիզմի դիրքերը միջազգային ասպարեզում»։

Պատմական այդ ժամանակաշրջանում մեր երկրի ազգային եկամուտն ավելացավ մոտ 4 անգամ, արդյունաբերական արտադրությունը՝ 5 անգամ, գյուղատնտեսական արտադրությունը՝ 1,7 անգամ։ Սովետական Միությունը հաստատապես աշխարհում առաջին տեղն է գրավում մի շարք կարևորագույն արտադրատեսակների թողարկմամբ։ Բնակչության մեկ շնչի հաշվով ռեալ եկամուտներն ավելացան 2,6 անգամ, սպառման հասարակական ֆոնդերը՝ ավելի քան 5 անգամ։ Բարելավվեցին ընտանիքների մեծ մասի բնակարանային պայմանները։ Ակնառու են հայրենական գիտության, կրթության, առողջապահության, մշակույթի հաջողությունները։

Համագումարի կարևորագույն փաստաթղթերում հետևողական մարքսիստական-լենինյան դիրքերից գնահատված է ժամանակակից աշխարհը, վերլուծված են նրա հիմնական միտումները և հակասությունները, ցույց է տրված առաջադիմության և հետադիմության ուժերի պայքարը։ Նշվեց, որ «ժամանակակից աշխարհը բարդ է, բազմազան, դինամիկ, ներթափանցված է հակամարտ միտումներով, լի՝ հակասություններով։ Դա բազմաբարդ այլընտրանքների, տագնապների և հույսերի աշխարհն է։ Նախկինում երբեք մեր երկրային տունը քաղաքական ու ֆիզիկական այսպիսի բեռնվածությունների չէր ենթարկվել։ Մարդը բնությունից չէր գանձել այնքան տուրք և երբեք այնքան խոցելի չէր եղել այն հզորության հանդեպ, որ հենց ինքն է ստեղծել»։ ՍՄԿԿ Կենտկոմի Քաղաքական զեկուցման մեջ, հենվելով Մարքսի և Լենինի այնքան արդիական հնչող հանճարեղ մտքերի վրա, Մ. Ս. Գորբաչովը բնութագրեց ժամանակակից աշխարհի հակասությունը, այն, որ գիտության ու տեխնիկայի զարգացումը բացում է բնության ուժերին տիրապետելու, մարդկության կենսապայմանները բարելավելու չտեսնված հնարավորություններ, բայց և «մյուս կողմից՝ «լուսավորյալ» քսաներորդ դարը պատմության մեջ մտել է իմպերիալիզմի այնպիսի պտուղներով, ինչպիսիք են ամենաարյունահեղ պատերազմները, միլիտարիզմի ու ֆաշիզմի մոլեգնումը, ցեղասպանությունը, միլիոնավորների ընչաքրկությունը։ Տգիտությունը և խավարամոլությունը կապիտալի աշխարհում դոյակցում են գիտության ու կուլտուրայի նվաճումների հետ։ Հենց դա է այն հասարակությունը, որի հետ մենք ստիպված ենք հարևանություն անել, փընտրել համագործակցության և փոխըմբռնման ուղիներ։ Այդպես է տնօրինել պատմությունը»։

Իմպերիալիզմի ագրեսիվ բնույթը նրան մղում է «մնալ պատմության թամբին» և հանուն դրա դիմել ամեն միջոցի։ Ինչպես նշվում է Կենտկոմի Քաղաքական զեկուցման մեջ, կապիտալիզմը ժողովուրդներին բերում է նաև մշակույթի աղքատացում, դարերով ստեղծված հոգևոր արժեքների խարխլում։ Նշելով, որ ոչ մի բան այնքան չի վնասում մարդուն, որքան գիտելիքները,

Մ. Ս. Գորբաչովը հանգեց այն ընդհանրացման, որ «հավանաբար, իր գոյության ոչ մի այլ ժամանակաշրջանում մարդկությունը կեղծիքի ու խաբեության այնպիսի ճնշում չի զգացել, ինչպես այժմ։ Բուրժուական պրոպագանդան հրմտորևն նենգափոխված ինֆորմացիայի հեղեղ է տեղում ամբողջ աշխարհի մարդկանց վրա, մտքեր ու զգացմունքներ պարտադրում, ծրագրավորում կառավարող ուժերին ձեռնտու քաղաքացիական ու սոցիալական դիրքորոշում։ Թե ինչպիսի գիտելիքներ, արժեքներ, բարոյական նորմեր կդրվեն բնակչությանը տրվող ինֆորմացիայի և կրթության սիստեմի հիմքում՝ դա առաջին հերթին քաղաքական պրոբլեմ է»։

Արված է այն կարևորագույն հետևությունը, որ XX դարի դեմքը, սկսած Մեծ հոկտեմբերից, որոշում են ազատագրական հեղափոխությունները, որ որրան էլ նշանակալից լինեն գիտության ու տեխնիկայի նվաճումները, «մարդու միայն սոցիալական ու հոգևոր ազատագրումն է նրան դարձնում իրոք ազատ»։

Որպես ստրատեգիական կուրս համագումարն ընտրեց երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացումը։ Դա նշանակում է տնտեսական աճի տեմպերի բարձրացում։ Այդ կարևոր հարցը հանգամանորեն քննարկված է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ ընկ. Ն. Ի. Ռիժկովի զեկուցման մեջ։ Նշվեց, որ ներկա ժամանակաշրջանում երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու կոնցեպցիայի լույսի ներքո տեմպերի հարցը սկզբունքային նշանակություն և նոր բովանդակություն է ստանում։ Դա ամենից առաջ նշանակում է ազգային եկամտի հարաճուն դինամիկա։ Նրա հավելաճի տեմպերը պետք է ավելանան այնքան, որ անցած հնգամյակի տարեկան միջին հաշվով 3,1 տոկոսից դարավերջին հասնեն 5 տոկոսի։ «Դրանով իսկ կհաղթահարվի վերջին երեք հնգամյակներում տեմպերի դանդաղեցման բացասական միտումը։ Էլ ավելի մեծ չափով կավելանա ազգային եկամտի բացարձակ հավելաճը։ Դրա շնորհիվ այդ ժամանակաշրջանում արտադրված ազգային եկամտի միագումար մեծությունը կկազմի մոտ 12 տրիլիոն ռուբլի, որն ավելի է, քան սովետական իշխանության բոլոր նախորդ տարիներինն։ Դա նշանակում է մինչև 2000 թ. հասնել երկրի արտադրական պոտենցիալի կրկնապատկման՝ նրա արմատական որակական նորացմամբ։ Դրան կարելի է հասնել, եթե ամբողջ տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրանա և, ինչպես նախատեսվում է, մինչև 2000 թ. հասնի 2,3—2,5 անգամի։ Առանց ազգային եկամտի այդպիսի աճի հնարավոր չի լինի լուծել խոշորամասշտաբ տնտեսական ու սոցիալական խնդիրները։

Հարկ է նկատի ունենալ, որ արագացման ստրատեգիան չի նշանակում միայն տնտեսական աճի տեմպերի բարձրացում։ Դրա էությունն ամենից առաջ աճի նոր որակի մեջ է, արտադրությունը վարելու նախկին՝ էքստենսիվ մեթոդների փոխարինումն ինտենսիվ մեթոդներով, արտադրանքի որակի արմատական բարելավումով։ Ավելին, ինչպես Կենտկոմի Քաղաքական զեկուցման մեջ շեշտեց Մ. Ս. Գորբաչովը, «արագացման կուրսը չի հանգեցվում վերափոխումների տնտեսական բնագավառում։ Այն նախատեսում է սոցիալական ակտիվ քաղաքականության իրականացում, սոցիալիստական արդարության սկզբունքի հետևողական հաստատում։ Արագացման ստրատեգիան ենթադրում է հասարակական հարաբերությունների կատարելագործում, քաղաքական և գաղափարախոսական ինստիտուտների աշխատանքի ձևերի ու մեթոդների նորացում, սոցիալիստական դեմոկրատիայի խորացում, ինիցիայի, լճացման ու սլահպանողականության, այն ամենի վճռական հաղթահարում, ինչը կասեցնում է հասարակական առաջադիմությունը»։

Երկրի զարգացման արդի փուլում կոմունիստական կուսակցությունը խնդիր է դնում ժողովրդի բարեկեցությունը բարձրացնել որակապես նոր աստիճանի։ Նշելով, որ տասնհինգամյա հորիզոնի ընտրությունը պայմանավորված է երկրի առջև կանգնած խնդիրների հարաճուն մասշտաբայնությամբ և բարդությամբ, համագումարն առաջնային նշանակություն տվեց աշխատանքի ոլորտում՝ մարդու գործունեության գլխավոր ոլորտում, սոցիալական պրոբ-

լեմների լուծմանը։ Նշվեց, որ առաջին հերթին պետք է կրճատվեն էականորեն ծանր, միօրինակ աշխատանքները։ Ավելի քան երկու անգամ կպակասի ձեռքի աշխատանքի բաժինը, մի բան, որը թույլ կտա սակավ որակյալ աշխատանքից ազատել ավելի քան 20 միլիոն մարդու, «նրանց գործունեությունը դարձնել բովանդակալից, գոհացնող»։ Համագումարի հավանությանն արժանացած «Հիմնական ուղղություններում» նախատեսվում է 15 տարվա ընթացքում արմատապես լուծել նյութական բարեկեցության և հոգևոր զարգացման կենսական, հասարակական բոլոր խավերի համար առանձնապես կարևոր պրոբլեմները։ Դա ամենից առաջ նշանակում է հասնել բարձրորակ ու բազմապիսի ապրանքների ու սպասարկումների հարաճուն վճարունակ պահանջարկի լրիվ բավարարման, հասնել գիտության կողմից հանձնարարվող սննդի ռացիոնալ նորմաների մակարդակին։ Մինչև 2000 թ. պետք է լուծվի սոցիալական մեծ նշանակություն ունեցող խնդիրը՝ յուրաքանչյուր սովետական ընտանիք պետք է ապահովվի բնակմակերեսով՝ առանձին բնակարանով կամ անհատական տնով։

Խորապես վերլուծելով ու գնահատելով անցյալի սխալներն ու թերությունները, կուսակցության Կենտրոնական կոմիտեն կուսակցությանն ու ժողովրդին է ներկայացնում այն դասերը, որոնք հաշվի առնելով՝ կարելի է ապահովել սովետական հասարակության զարգացումը, արագացնել ստրատեգիական կուրսը։ Այդ դասերն են. առաջին. ճշմարտության դասը։ «Մեր ուժը,— ասել է Լենինը,— ճշմարտությունն ասելն է»։ Այդ մասին ՍՄԿԿ Կենտկոմի Քաղաքական զեկուցման մեջ Լենինյան անմիջականությամբ ու պարզորոշությամբ ասաց նաև ընկ. Գորբաչովը։ «Հարկ է լինում լսել կոշեր ավելի զգուշությամբ խոսելու մեր թերությունների ու վրիպումների մասին, դժվարությունների մասին, որոնք անխուսափելի են ամեն մի կենդանի աշխատանքում։ Այստեղ պատասխանը կարող է լինել մեկը, Լենինյան պատասխանը. կոմունիստներին միշտ և բոլոր հանգամանքներում ճշմարտությունն է պետք»։ Երկրորդ դասը վերաբերում է պրակտիկ գործողությունների մեջ նպատակամետությանը և վճռականությանը։ Համագումարը նշեց, որ «սկսելով վերափոխումները, չի կարելի սահմանափակվել կիսատ-պռատ միջոցառումներով։ Հարկավոր է գործել հետևողականորեն ու եռանդագին, կանգ չառնելով ամենահամարձակ քայլերի առջև»։ Երրորդ դասը, որը թերևս գլխավորն է, այն է, թե կյանքի վճռական բեկման քաղաքականության մեջ որքան ակտիվորեն ու գիտակցաբար են մասնակցում մասսաները։ Նախատեսված հիրավի հեղափոխական վերափոխումները կյանքի կկոչվեն, իրականություն կդառնան, եթե մասսաները համոզվեն, որ դրանք անհրաժեշտ են։ Բայց միայն դա բավական չէ։ Կարևոր է նաև այն, թե որքանով են մասսաները բարոյապես և նյութապես շահագրգռված առաջադրվող վիթխարի պլանների կենսագործման մեջ։ Վերին աստիճանի կարևոր է նաև կադրերի հոգեբանության վերակառուցումը, հին սովորությունների, դանդաղկոտության, ճապաղության, նախաձեռնությունից զուրկ գործելակերպի հաղթահարումը։ Մասսաների ակտիվության կարևոր պայմաններից է նաև այն, թե որքան բարձր կլինի կարգապահությունը և կազմակերպվածությունը, հանձնարարված աշխատանքի, դրա արդյունքների համար յուրաքանչյուրի պատասխանատվությունը։

Ինչպես հավաստեց համագումարը, ձեռնարկվող միջոցառումները կհանդեցնեն նրան, որ «սովետական մարդիկ... կարճ ժամկետներում զգան պարենային պրոբլեմի արմատական լուծման, բարձրորակ ապրանքների և ծառայությունների նկատմամբ եղած պահանջմունքների բավարարման, բժշկական սպասարկման, բնակկենցաղային պայմանների, շրջակա միջավայրի պահպանության բարելավման նպատակով գործադրվող ընդհանուր ջանքերի արդյունքները»։

Առաջնահերթ խնդիր է դարձել տնտեսության վերակառուցումը գիտատեխնիկական առաջադիմության հիման վրա։ Այդ նպատակին ընթացիկ հինգամյակում արդեն կհատկացվեն շուրջ 200 միլիարդ ռուբլու կապիտալ ներդրումներ, որ հնարավորություն կընձեռի վերակառուցել և տեխնիկապես վերա-

ալինել արտադրությունը։ Եվ որովհետև հենց մեքենաշինության մեջ են նյութականացվում հիմնարար գիտատեխնիկական գաղափարները, ապա բացառիկ ուշադրություն է նվիրվելու ինդուստրիայի այդ կարևորագույն հատվածի արդիականացմանը, արտադրանքի որակի բարձրացմանը։ Այսպես, օրինակ, միայն գիտության ժամանակակից մակարդակով կատարելագործված «Դոն-1500» կոմբայնի կիրառումը հնարավորություն կտա զգալիորեն կրճատել հացահատիկահավաք մեքենաների համակազմը, աղատել մոտ 400 հազար մեխանիզատորների, միլիոնավոր տոննաներով պակասեցնել հացահատիկի կորուստները։ Կամ, ում հայտնի չէ, որ երկրում չափազանց սուր է ծառացած ավտոմեքենաների դողերի հարցը։ Բոլորն էլ գիտակցում են, որ այդ խնդրի լուծման առավել խնայողական ուղին դողերի դիմացկունության մեծացումն է, նրանց որակի արմատական բարելավումը։ Ուշագրավ է այն, որ դողերի դիմացկունության ցուցանիշի բարձրացումը տասը տոկոսով հավասարազոր է տարեկան 6 միլիոն դողի թողարկման։ Սա մոտավորապես այնքան է, որքան մեր այսօր չի բավականացնում թե՛ ժողովրդական տնտեսության, թե՛ բնակչության պահանջմունքները բավարարելու համար։ Այս երկու օրինակները բավական են ցույց տալու համար, թե կյանքի բոլոր բնագավառների բեկման ներկա ժամանակաշրջանում ինչպիսի վճռական դեր ունի խաղալու գիտությունը, գիտատեխնիկական առաջադիմությունը։ Ելնելով դրանից, համագումարը գիտությունների ակադեմիաներից, ճյուղային գիտահետազոտական ինստիտուտներից, բարձրագույն դպրոցի գիտնականներից պահանջում է հեղափոխական փոփոխություններ ապահովող հայտնագործություններ և գյուտեր, իսկ արտադրությունից՝ շրջադարձ դեպի գիտությունը։

Ամբողջ սրությամբ դրվում է նորովի մտածող երիտասարդ գիտական մասնագետների պատրաստման հարցը, մի բան, որի հաջող լուծումը կապահովի մեր նոր թռիչքը եկող հարյուրամյակում։

Առաջնահերթ խնդիր համարվող պարենային պրոբլեմի լուծումը պահանջում է կատարելագործել արտադրական հարաբերությունները գյուղում։ Դա նշանակում է ընդլայնել կոլտնտեսությունների ու սովխոզների ինքնուրույնությունը, մեծացնել նրանց շահագրգռությունը, պատասխանատվությունը վերջնական արդյունքների համար։ Ինչպես նշեց Մ. Ս. Գորբաչովը, «ըստ էության, խոսքը վերաբերում է արդի պայմանների համեմատ պարենհարկի մասին լենինյան գաղափարի ստեղծագործական օգտագործմանը»։ Բեկումն ապահովելու, սոցիալ-տնտեսական դժվարին խնդիրները լուծելու ճանապարհին հատկապես կարևոր է համագումարի այն դիրքորոշումը, որ կոլտնտեսությունների ու սովխոզների համար ըստ հնգամյակի տարիների սահմանվեն արտադրանքի գնումների կայուն պլաններ, որոնք ենթակա չեն փոփոխման։ Միաժամանակ նրանց հնարավորություն է տրվում հացահատիկի պլանից ավելի ամբողջ ստացածը, իսկ որոշ մթերքների արտադրանքի զգալի մասն օգտագործել իրենց հայեցողությամբ։ Դա և այլ միջոցառումներ մեծ հնարավորություններ կբացեն նախաձեռնության և ձեռներեցության համար։ Տնտեսավարման պայմանները գյուղում արմատապես կփոխվեն։ Համագումարը դրեց գյուղի արտադրական գործունեությանն անձեռնահաս միջամտության ուղիները վճռականորեն փակելու խնդիրը։

Համագումարն ամբողջ սրությամբ հարց դրեց՝ նոր պահանջների մակարդակին բարձրացնել էկոնոմիկայի կառավարումը։ «...այժմ իրավիճակն այնպիսին է, որ մասնակի բարեփոխումներով սահմանափակվել չի կարելի, անհրաժեշտ է արմատական ռեֆորմ... Մենք կանգնած ենք,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի Քաղաքական զեկուցման մեջ,— սոցիալիստական տնտեսական մեխանիզմի ամենալուրջ վերակառուցման առջև»։ Պետք է վճռականորեն դեն նետել «իր դարն ապրած կամ իրեն շարդարացրած ամեն ինչ», «ամեն ինչ պետք է կախման մեջ դրվի վերջնական արդյունքից»։ Բացառիկ կարևոր է համագումարի այն դիրքորոշումը, որի համաձայն արտադրական ձեռնարկությունները ինքնուրույն են գործելու՝ սեփական նախաձեռնությամբ վաստակելու ար-

տադրության ընդլայնման, տեխնիկական նորացման անհրաժեշտ միջոցները։ Այդ ինքնուրույնությունը հատկապես իրեն զգալ կտա սպառման ապրանքների արտադրության ու սպասարկման ոլորտում։ Խստորեն հաշվի կառնվեն սպառողների պահանջները, պայմանագրեր կկնքվեն առևտրական կազմակերպությունների հետ։ Իսկ այդ ամենը լրջորեն կխթանի արտադրանքի որակի բարձրացմանը, սեփական միջոցների հաշվին աշխատավորների սոցիալական պրոբլեմների լուծմանը։ Դնելով այն հարցը, որ կառավարման և տնտեսավարման ձևերն ու մեթոդները պետք է համապատասխանեցվեն արդի պահանջներին, համագումարի «Բանաձևում» ասվում է. «Կառավարման կատարելագործումը պահանջում է մտածողության վերակառուցում, կուսակցական ակտիվի, տնտեսական կադրերի, աշխատավորության լայն գանգվածների կողմից նոր խնդիրների հստակ ըմբռնում, ստեղծված ստերեոտիպերից հրաժարում»։ Համագումարը պահանջեց, որպեսզի ջանքերը կենտրոնացվեն կազմակերպվածության ու կարգապահության ամրապնդման, անտնտեսվարության հաղթահարման վրա, ընդգծեց, որ «պլանավորման և կառավարման մարմինները պետք է վճռականորեն շրջել դեպի սոցիալական ոլորտի պահանջմունքները, մինչև վերջ հաղթահարել այստեղ հասունացած պրոբլեմների թերագնահատումը»։

Արտատական հարցերի լուծման ճանապարհին առաջնակարգ խնդիր է մարդկանց մեջ տնտեսատիրոջ զգացում դաստիարակելը։ Միամտություն կլինի պատկերացնել, թե դրան կարելի է հասնել խոսքով։ Ո՛չ։ Դրան կարելի է հասնել էկոնոմիկայի մեջ սոցիալիստական ինքնակառավարման հետագա խորացմամբ։ «Չի կարելի երկրի տեր լինել առանց իր գործարանում կամ կոլտնտեսությունում, արտադրամասում կամ ֆերմայում իսկական տեր լինելու»։

Համագումարի ամբիոնից որպես նեգատիվ երևույթների դեմ վճռական պայքարի լենինյան դիրքորոշում հնչեց ընկ. Գորբաչովի հետևյալ միտքը. «Հարկավոր է հուսալի պատնեշ կանգնեցնել հանրային սեփականությունից անաշխատ եկամուտներ կորզելու ամեն տեսակ փորձերի դեմ։ Չէ որ մեզանում չեն մերացվել «թռցնողները», որոնք հանցագործություն չեն համարում ձեռնարկություններից կրել-տանել այն ամենը, ինչ ձեռքներն է ընկնում, ասենք, նաև ամեն կարգի կաշառակերներն ու գռփողները, որոնք չեն խորշում իրենց պաշտոնական դիրքն օգտագործել շահադիտական նպատակներով։ Թե՛ նրանց, թե՛ մյուսների նկատմամբ հարկավոր է գործադրել օրենքի ամբողջ ուժը, հասարակական դատապարտման ամբողջ ուժը»։

Համագումարը մեծ տեղ հատկացրեց սովետական հասարակության սոցիալական քաղաքականությանը և որոշեց նրա հիմնական ուղղությունները։ Նշվեց, որ պետք է վճռական շրջադարձ կատարել դեպի սոցիալական ոլորտի պահանջմունքները։ Դատապարտվեց անցյալի այն սխալ պրակտիկան, երբ «տեխնոկրատական մոտեցումների հայտնի հակումը թուլացրել էր ուշադրությունը արտադրության սոցիալական կողմի, կենցաղի, ժամանցի նկատմամբ»։ Այնինչ, կուսակցության ծրագրային նպատակն է հասնել հասարակության բոլոր անդամների լիակատար բարեկեցության և ազատ, բազմակողմանի զարգացման։ Մերժելով մեր կյանքում տեղ գտած նեգատիվ երևույթները, կոմունիստական կուսակցությունը ձգտում է կյանքում ամրապնդել սոցիալական արդարությունը, այսինքն՝ փակել անաշխատ եկամուտների, պարազիտիզմի ճանապարհը և ապահովել ըստ աշխատանքի բաշխումը։ Առանց սքողելու իրականությունը, ընկ. Գորբաչովը նշեց, որ «վերահսկողության թուլացման հետևանքով և մի շարք այլ պատճառներով հայտնվել են մարդկանց խմբեր, որոնք ունեն պարզորոշ արտահայտված սեփականատիրական ձգտումներ, հասարակական շահերի նկատմամբ արհամարհական վերաբերմունք», որ մեր սկզբունքների կոպիտ խախտում է նաև այն, երբ լավ աշխատողի ու անփույթ աշխատողի աշխատանքը վարձատվում է միատեսակ, մի բան, որը չի նպաստում աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, դառնացնում, թևաթափ է անում ազնիվ և անձնվեր աշխատավորին։

Վճռականորեն և առանց նահանջելու բռնելով սոցիալիստական հասարակության խորթ երևույթների հաղթահարման ուղին, պաշտպանելով աշխատավորների պահանջները, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն մշակել է և առաջիկայում կկիրառի այդ նպատակին ուղղված միջոցառումներ։ Համագումարում նշվեց, որ «անհրաժեշտ է համարված արդեն ամենամոտ ժամանակներս իրականացնել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված պորտաբույծների, սոցիալիստական սեփականության հափշտակողների, կաշառակերների դեմ, նրանց դեմ, ովքեր բռնել են մեր կարգերի աշխատավորական բնույթին խորթ ուղի»։ Միաժամանակ դրվեց այն հարցը, որ պետք է լավ քննել նաև հարկային քաղաքականության կատարելագործման, այդ թվում՝ ժառանգության պրոգրեսիվ հարկի վերաբերյալ առաջարկությունները։

Համագումարը մեծ ուշադրություն նվիրեց մեր հասարակության սոցիալ-դասակարգային և ազգային հարաբերությունների կատարելագործմանը, սովետական ընտանիքի ամրապնդմանը, հասարակության մեջ կնոջ դերի հետագա բարձրացմանը, պատերազմի և աշխատանքի վետերանների նկատմամբ հոգատարության ուժեղացմանը։

Վերստին հաստատելով բոլոր ժողովուրդների ազգային մշակույթի և ազգային արժանապատվության հանդեպ լենինյան հարգանքը, համագումարը միաժամանակ պահանջեց անհանդուրժողական վերաբերմունք ունենալ դեպի ազգային բացառիկությունը, սահմանափակվածությունը, կրոնական վերապրուկները, մերժելի ծեսերն ու սովորությունները։ Պատմական առաջընթացը, իրենց իսկ ազգերի շահը պահանջում է ամեն կերպ խթանել ազգային մշակույթների փոխհարստացմանը, ազգերի մերձեցմանը։ Համագումարի «Բանաձևում» ազգային քաղաքականության վերաբերյալ հատկապես ուշադրություն է դրավում այն միտքը, որ կոմունիստական կուսակցությունը «...մի առանձին նրբազգացություն և շրջահայեցություն կդրսևորի այն ամենում, ինչ վերաբերում է ազգային հարաբերությունների զարգացմանը, շոշափում է յուրաքանչյուր աղգի և ազգության շահերը, մարդկանց ազգային զգացմունքները, ժամանակին կլուծի այդ ոլորտում ծագող հարցերը, սկզբունքային պայքար կմղի նացիոնալիզմի ու շովինիզմի, տեղայնության ամեն տեսակ դրսևորումների դեմ»։

Համագումարը մեծ ուշադրություն նվիրեց սովետական հասարակության հետագա դեմոկրատացման, ժողովրդի սոցիալիստական ինքնավարության խորացման հարցերին։ Վճռականորեն դատապարտելով բյուրոկրատիզմը, որը, ցավոք, տեղ է գտել մեր հասարակության շատ օղակներում, համագումարը նշեց, որ «դեմոկրատիան այն առողջ ու մաքուր օդն է, որով միայն լիարյուն կարող է ապրել սոցիալիստական հասարակական օրգանիզմը»։ Մարդկանց կողմից ազատ և անկաշկանդ հարցադրումները, մեր հասարակության մեջ նրկատվող թերությունների համարձակ քննադատությունը, հրապարակայնությունը պետք է դառնան տիրապետող երևույթ, կյանքի օրենք, այլապես հնարավոր չի լինի լիովին օգտագործել այն հզոր պոտենցիալը, որով օժտված է սոցիալիստական հասարակարգը։

Անդրադառնալով կյանքում հրապարակայնությունն ամրապնդելու հարցերին, համագումարն ի լուր ամենքի պահանջում է շարքային կոմունիստների, աշխատավորների, վերից-վար բոլոր ազնիվ մարդկանց ակտիվության աննախընթաց բարձրացում։ Դրան կարելի է հասնել հասարակության քաղաքական սիստեմի կատարելագործման, բյուրոկրատիզմի մինչև վերջ հաղթահարման ճանապարհով։ Համագումարի «Բանաձևում» այդ առթիվ տրված են այն ուղիները, որոնք կարող են ապահովել առաջադրված լուրջ պրոբլեմի լուծումը։ Դա ամենից առաջ վերաբերում է սովետների ինքնուրույնության և պատասխանատվության ուժեղացմանը, ընտրական պրակտիկայի կատարելագործմանը։

Համագումարն անհրաժեշտ գտավ «ապահովել աշխատավորական կոլեկտիվների և բնակչության ժողովների առջև գործկոմների, դատավորների, մինիստրների և կառավարման մյուս մարմինների ղեկավարների հաշվետվու-

թյունների սիստեմի կանոնավորությունն ու ներգործությունը, ավելի արդյունավետորեն օգտագործել աշխատավորների կողմից կառավարչական ապարատի աշխատանքի վերահսկողության տարբեր ձևերը։ Համագումարը պաշտպանում է,— ասված է «Բանաձևում»,— սովետական և հասարակական մարմինների ապարատի պատասխանատու աշխատողների ատեստավորման սիստեմ մտցնելու առաջարկությունը»։ Համագումարը կարևոր խնդիրներ առաջադրեց հասարակական կազմակերպություններին, որոնց գործունեության արմատական վերակառուցումը լրջորեն կնպաստի դեմոկրատիայի ընդլայնմանը և խորացմանը։ Առաջարկվեց արհմիություններին և կոմերիտմիությանը, ստեղծագործական միություններին և կամավոր ընկերություններին, կանանց կազմակերպություններին «իրավունք տալ մի շարք դեպքերում կասեցնելու կառավարչական որոշումների կատարումը»։ Պահանջվում է կատարելագործել համաժողովրդական քվեարկումների, այդ առթիվ անցկացվող քվեարկության, սովետների որոշումների նախագծերի քննարկման պրակտիկան, ավելի լավ օգտագործել «ուղղակի դեմոկրատիայի զարգացման մյուս կանալները, քաղաքացիների ժողովները, ընտրողների պատվիրանները, մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը, աշխատավորների նամակները, հասարակական կարծիքի պարզման բոլոր միջոցները»։

Համագումարը սովետական դեմոկրատիայի զարգացման կարևոր պայման է համարում «պետական և հասարակական կյանքի իրավական հիմքի մշտական ամրապնդմանը, օրենքների խստագույն կիրառմանը, սովետական մարդու իրավունքների և ազատությունների երաշխիքների ամրապնդմանը» ուղղված միջոցառումները։

Համագումարի կարևորագույն փաստաթղթերում բացառիկ ուշադրություն նվիրվեց ՍՄԿԿ արտաքին քաղաքական ստրատեգիայի գլխավոր նպատակին։ Այլ կերպ ասած՝ որպեսզի երկրի առջև ծառացած մեծ խնդիրները հաջողությամբ լուծվեն, անհրաժեշտ է «ապահովել կայուն խաղաղության և առատության պայմաններում աշխատելու հնարավորություն»։ Նշվեց, որ բեկումը չի վերաբերում միայն ներքին կյանքի պրոբլեմներին։ Այն վերաբերում է նաև միջազգային կյանքում հարաբերությունների արմատական բեկմանը, պատերազմի սպառնալիքի բացառմանը, ժողովուրդների համար ռազմական բեռի հաղթահարմանը, զարգացող երկրներում կուտակված ահռելի պարտքի մարման ուղիների որոշմանը, էկոլոգիական և այլ ու այլ գլոբալ թե լոկալ պրոբլեմների լուծմանը դիվանագիտական և քաղաքական բանակցությունների ճանապարհով։ Այդ ուղղությամբ արդեն մի շարք կոնկրետ քայլեր կատարված են։ 1986 թ. հունվարի 15-ի Հայտարարությամբ սովետական կառավարությունն աշխարհի առջև ամենայն պարզորոշությամբ ու բարի կամքով բացել է իր նպատակները՝ մինչև նոր դարի սկիզբը էտապ առ էտապ կրճատել և լիովին վերացնել մասսայական բնաջնջման զենքը։ Ռեակցիոն, աջ ուժերը երկյուղով են վերաբերվում այդ արմատական առաջարկներին, որովհետև դրանց բացահայտ մերժումը կվարկաբեկի նրանց՝ իրենց իսկ ժողովուրդների աչքում։

ՍՄԿԿ Կենտկոմի Քաղաքական զեկուցման և այդ առթիվ ընդունված «Բանաձևում» նշվում է, որ կուսակցության մեծ կանխատեսումները կարող են կենսագործվել, և բեկումը կապահովվի կյանքի բոլոր բնագավառներում, եթե ապահովվի «կուսակցական աշխատանքի արմատական վերակառուցում», նրա ոճի ու մեթոդների մեջ ամուր հաստատվեն բոլշևիկյան սկզբունքները, «կոմունիստների վարքագծի գաղափարաբարոյական նորմերը», եթե լենինյան սկզբունքներով ապրող ու գործող կուսակցությունն ապահովի հասարակության քաղաքական վճռական ուժի իր դերը։ Բանն այն է, որ ինչպես համագումարից առաջ, այնպես էլ նրանից հետո «վերակառուցման անհրաժեշտությունը գիտակցված է դեռևս ոչ բոլորի կողմից և ոչ ամենուրեք»։

Համագումարը սահմանեց, որ պետք է մինչև վերջ հաղթահարվի ճշմարիտ իրավիճակը գունազարդելու ձգտումը, որ «իրերն իրենց անունով կոչելը, ամեն ինչի մասին անկեղծորեն դատելը, վերադաս կուսակցական մարմին-

ներին և մասսաներին օբյեկտիվորեն ինֆորմացիա տալը, միշտ և ամեն ինչում բարձր պահանջկոտություն և ազնվություն դրսևորելը պետք է անշեղ կանոն լինեն կուսակցական աշխատանքում։ Իսկ դա կապահովվի, եթե ստեղծվի անկեղծության, հրապարակայնության, մարդկայնության մթնոլորտ։ Այդ պայմաններում միայն հնարավոր կլինի լիարժեք ծավալել քննադատությունն ու ինքնաքննադատությունը, խստորեն պատժել նրանց, ովքեր կփորձեն խեղդել առողջ քննադատության ձայնը, որն այնքան պետք է մեր կյանքում արմատավորված լուրջ թերությունները, մերժելի երևույթները բացահայտելու և վճռականորեն հաղթահարելու համար։ Համագումարը պահանջում է պայքարել շքամոլության դեմ, «ուղղել այն աշխատողներին, որոնք խոսքով հանդես են գալիս վերակառուցման օգտին, սակայն դատում և գործում են հնացած սխեմաներով, հիվանդագին են ընդունում իրենց հասցեին արված դիտողությունները»։ Առաջարկվում է անդուլ պայքար ծավալել «կուսակցականի անաղարտ ու ազնիվ նկարագրի համար», լրջորեն բարելավել կուսակցության շարքերի մաքրման, ընդունելությունը լենինյան, բոլշևիկյան սկզբունքներով իրականացնելու գործը, կուսակցության դռները փակել այնպիսիների առջև, ովքեր «նրա մեջ ընդունվում են կարիերիստական մղումներով, ակնկալելով կյանքի բարիքներ ստանալու ինչ-որ առավելություններ, օրենքի ներողամտություն»։

Համագումարը վերստին ազդարարեց լենինյան սկզբունքը, այն է. «Ոչ մի արտոնություն կուսակցության անդամի համար չկա, կան միայն լրացուցիչ պարտականություններ»։ Նրանք որպես քաղաքական մարտիկներ և մասսաների կազմակերպիչներ պետք է դաստիարակվեն բոլշևիզմի մեծ ավանդույթների, ճշմարիտ ընկերականության ոգով, պետք է հասնեն նրան, որպեսզի կուսակցական միջավայրից, մեր ամբողջ կյանքից դուրս մղվի շողոքորթությունը, հաճոյակատարությունը, ստորաքարշությունը։ «Սկզբունքայնությունը, համեստությունն ու ինքնաքննադատությունը պետք է բնական լինեն կոմունիստի համար»։ Համագումարը վերը շարադրված հարցերի լուծման կարևոր պայման է համարում սկզբունքային կադրային քաղաքականությունը։ «Կուսակցությունը չի հաշտվի,— ասված է «Բանաձևում»,— մեզ համար խորթ պրոտեկցիոնիզմի պրակտիկայի, անձնական նվիրվածության ու հայրենակցության հատկանիշներով աշխատողներին առաջ քաշելու պրակտիկայի հետ... Առանձնակի պահանջ պետք է ներկայացվի այն կոմունիստներին, որոնց վստահված է գլխավորել կուսակցական կազմակերպությունները»։

Արմատական վերակառուցման կարիք ունի գաղափարախոսական աշխատանքը։ Վճռականորեն հաղթահարելով ֆորմալիզմը, սխոլաստիկան, հայեցողականությունը, պետք է «կադրերի մեջ դաստիարակել տեսությունը յուրացնելու հակում, սոցիալական պրոցեսների վերլուծման լենինյան մեթոդաբանությանը տիրապետելու հմտություն... քաղաքականապես հասուն մտածելու և գործելու հմտություն»։

Համագումարը մեծ ուշադրություն նվիրեց հասարակական գիտությունների դերին։ Կենտկոմի Քաղաքական զեկուցման մեջ նշվեց. «Ստեղծագործական մթնոլորտը, որը կուսակցությունը հաստատում է կյանքի բոլոր բնագավառներում, առանձնապես արգասավոր է հասարակական գիտությունների համար։ Մենք հուսով ենք, որ մեր տնտեսագետներն ու փիլիսոփաները, իրավաբաններն ու սոցիոլոգները, պատմաբաններն ու գրականագետներն այդ մթնոլորտը ակտիվորեն կօգտագործեն նոր պրոբլեմների համարձակ, նախաձեռնողական առաջադրման համար, դրանց տեսական ստեղծագործական մշակման համար»։

Համագումարն ընտրեց կուսակցության կենտրոնական օրգաններ։ Մարտի 6-ին տեղի ունեցավ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումը։ Միաձայն Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց Մ. Ս. Գորբաչովը։

Համագումարի առողջ, համարձակ, քննադատական ոգին, հարցերի առաջադրման պարզությունը և դրանց իրագործման գիտականորեն հիմնավորվածությունը պայծառ լավատեսությամբ են տրամադրում սովետական մարդկանց՝ նոր բնկումնային ժամանակաշրջանի բարդ խնդիրների լուծման ճանապարհին։